



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՐԻՄԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ ՔՐԵՏԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, յառաջիկայ Կիրակի տօնն Է Վերացման Ս. Խաչին:

Տաղաւար տօները կանխող շաբաթը, մեր տօնացոյցին համաձայն, պահոց օրեր են: Արդ՝ Կիրարի, Սեպտեմբեր 9-ը Բարեկենդան Ս. Խաչի Պահոց օրն է:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի պատարագէ Քրեւենթա Հովիտի Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ մէջ եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող հոգեւոր իր պատգամը:

Ս. Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հօր նախագահութեամբ, տեղի պիտի ունենայ պաշտօնական բացումը Եկեղեցւոյ կից շէնքի վերնայարկին, որ պիտի ծառայէ երիտասարդական նորակազմ խմբակի, ինչպէս նաեւ կիրակնօրեայ վարժարանի կազմակերպչական աշխատանքներուն:

PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AT THE CRESCENTA VALLEY PARISH

On Sunday, September 16, the Armenian Apostolic Church will celebrate the Feast of the Exaltation of the Holy Cross. According to our church calendar a week-long fast takes place preceding each tabernacle feast. Thus, Sunday, September 9 is the eve of the Fast of the Holy Cross.

On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at the Armenian Apostolic Church of Crescenta Valley. Following the services, the Prelate will preside over the opening ceremony of the building adjoining the church. The hall will be utilized by the youth group and for Sunday School activities.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ Կ'ԸԼԼԱՅ ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ ՀԱՆԳԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿԻՆ

Կազմակերպութեամբ Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութեան, Շաբաթ, Սեպտեմբեր 8-ի երեկոյեան, տեղի պիտի ունենայ հանգանակային ձեռնարկ մը, ի նպաստ Համազգայինի Շրջանային

Վարչութեան մշակած ծրագիրներուն իրագործման: Հիւրընկալութիւնը ստանձնած են կլենտէյլաքնակ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Պէքի Պէրպէրեանները:

Ընդառաջելով Շրջանային Վարչութեան հրաւերին, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին, փոխանցելու իր գնահատանքի խօսքը եւ յաջողութեան մաղթանքները ապագայի բոլոր ծրագիրներու իրագործման համար:

PRELATE TO ATTEND HAMAZKAYIN FUNDRAISER

On the evening of Saturday, September 8, a fundraising event will take place organized by the Hamazkayin Regional Executive and hosted by Mr. and Mrs. Sarkis and Becky Berberian.

The Prelate will attend the event and will convey his commendation to the Executive as well as his best wishes for the successful realization of their future endeavors.

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ Ս. ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԱՇԽԵՆ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ

Ազգ. Առաջնորդարանի Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն մատրան մէջ ամսական դրութեամբ տեղի ունեցող հերթական պատարագներուն ծիրին մէջ, եւ Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, Շաբաթ, Սեպտեմբեր 15-ի երեկոյեան ժամը 6:30-ին, հանդիսապետութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազանին, Ս. եւ Ամմահ պատարագ պիտի մատուցուի:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ Օրէնճ Քաունթիի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգւոր հովիւ՝ Արժ. Տ. Հրանդ Քիւյ. Երեցեան: Պատարագի ընթացքին Առաջնորդ Սրբազան Հայրը իր օրհնութիւնները պիտի փոխանցէ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը, յատկապէս Կիրակնօրեայ դպրոցներու տեսուչները, ուսուցչական կազմերը, եւ մասնաւորաբար երիտասարդները, ներկայ ըլլալու Ս. Պատարագին:

DIVINE LITURGY AT THE PRELACY CHAPEL

On the evening of Saturday, September 15, Divine Liturgy will be celebrated at the Prelacy St. Dertad and St. Ashkhen Chapel. The service will begin at 6:30 p.m.

The Prelate will preside over Liturgy, which will be celebrated by Rev. Hrant Yeretsian, pastor of Forty Martyrs Church in Orange County. The Prelate will also deliver the sermon.

ՎԵՐԱՄՈՒՏ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

Մեր Ազգային Վարժարանները Չորեքշաբթի, 6 Սեպտեմբերի առաւօտուն վերաբացին իրենց դուռները, շարժման մէջ դնելով ուսումնական 2007-2008 տարեշրջանը: Վերամուտը կատարուեցաւ աղօթքով ու կարճ արարողութեամբ մը, որուն մասնակցութիւն բերին ծխական շրջաններու հոգեւոր հովիւները:



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան վերամուտի առաւօտը բոլորեց Ազգային Վահան եւ Անուշ Շամլեան վարժարանի աշակերտութեան ու դաստիարակներուն հետ: Առաջնորդ Սրբազանին կողքին ներկայ էին Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Կոմիտաս Քիւյ. Թորոսեան եւ Տ. Արտակ Քիւյ. Տեմիրճեան: Ներկայ էին Ազգ. Վարժարաններու իսկամակալ

Մարմինի ներկայացուցիչ Տիար Ծորճ Զօրպաճեան եւ վարժարանի Ուսումնական Մարմինի ներկայացուցիչ Տիկին Ալին Պապայեան:

Այս առիթով, Առաջնորդ Սրբազանը պատգամ մը ուղղեց աշակերտներուն, վեր առնելով Հայ Դպրոցին ու հայեցի դաստիարակութեան բարիքները, որոնք կը բաշխուին իրենց՝ տնօրէնութեան ու դաստիարակներուն կողմէ: Առաջնորդ Սրբազանը յիշեցուց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ 2007 տարին հռչակուած է Հայ Լեզուի Տարի, հետեւաբար, ան յանձնարարեց ո՛չ միայն յատուկ հանդիսութիւններով ու ձեռնարկներով ընդառաջել Վեհափառ Հայրապետի կոչին, այլ նաեւ տարուան իւրաքանչիւր օրուան հետ վերահաստատել մեր լեզուին, դարաւոր մշակոյթին ու հոգեկան արժեքներուն հանդէպ հաւատարմութեան ուխտը:

Խօսք առին նաեւ վարժարանին տնօրէնը՝ Տիար Վազգէն Մատենլեան, փոխ տնօրէնը՝ Տիկին Ռիթա Գաբրիէլեան եւ Ուսումնական Մարմինի ներկայացուցիչը:

Յայտնենք, որ վերամուտը մեր աշակերտութեան հետ բոլորող հոգեւոր հայրերը Առաջնորդ Սրբազանին գրաւոր պատգամը փոխանցեցին աշակերտութեան: Ազգ. Առաջնորդարանի Ըրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան այցելեց Ազգ. Մեսրոպեան վարժարան ու առաջնորդեց աղօթքի պահը:

Վերամուտի առիթով, Առաջնորդ Սրբազանը հաղորդակցութեան մէջ մտաւ Ազգային Վարժարաններու, մանկապարտեզներու եւ

մանկամսուրներու տնօրէններուն ու վարիչներուն հետ, փոխանցելով իր օրհնութիւնն ու բարեմաղթութիւնները՝ յաջող տարեշրջանի մը համար:

PRELACY SCHOOLS COMMENCE NEW ACADEMIC YEAR

On the morning of Wednesday, September 6, Prelacy schools commenced the 2007-2008 academic year with traditional opening ceremonies and prayers led by our pastors.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, accompanied by St. Mary's pastors Rev. Gomidas Torossian and Rev. Ardag Demirjian, attended and participated in the opening of Vahan and Anoush Chamlian School. Also in attendance was Board of Regents representative Mr. George Chorbajian, and education committee representative Mrs. Aline Babayan.

On this occasion, the Prelate conveyed his message to the students in which he reminded the students that H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, has declared 2007 the Year of the Armenian Language, urging them to coordinate various events to celebrate our language.

Principal Mr. Vazken Madenlian, Vice-Principal Mrs. Rita Kaprielian, and Mrs. Aline Babayan also delivered their remarks to the students.



Parish pastors visited other Prelacy schools where they led prayer services and conveyed the Prelate's back to school message to the students and administrators. Prelacy Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian participated in the opening ceremony of Mesrobian High School in Montebello.

The Prelate was also in telephone contact with all the principals and directors of our schools and pre-schools to offer his blessings and wishes for a successful year.

ՎԵՐԱՄՈՒՏ ԹԵՄԻՍ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ

Արեւմտեան մեր Թեմին համար, Խաչվերացի տօնը աւանդաբար մեր Կիրակնօրեայ վարժարաններու վերամուտի եւ աշակերտներու արձանագրութեան օրն է:

Կիրակի, Սեպտեմբեր 16-ին, մեր եկեղեցիներու Կիրակնօրեայ վարժարանները պաշտօնապէս պիտի բանան իրենց դուռները:

Ան ի պատրաստութիւն նոր տարեշրջանին, Շաբաթ, Սեպտեմբեր 15-ին, լսարան-հաւաք մը կազմակերպուած է Կիրակնօրեայ վարժարաններու տեսուչներուն եւ ուսուցիչներուն համար:

Առաջնորդ Սրբազան Զօր նախագահութեամբ, Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմինի նախաձեռնութեամբ եւ առաջնորդութեամբ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Գերայ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեանի, ուսուցիչներու լսարան-հաւաքը տեղի պիտի ունենայ Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ, կ.ե. ժամը 4-էն 6:00:

Կը հրաւիրենք մեր սիրելի ծնողները, որպէսզի իրենց զաւակները առաջնորդեն Կիրակնօրեայ վարժարան, հաղորդակից դառնալու համար հայ եկեղեցւոյ հաւատքին եւ պատմութեան:

SEMINAR FOR SUNDAY SCHOOL DIRECTORS AND TEACHERS

In keeping with tradition, all Prelacy Sunday Schools will resume classes on Sunday, September 16, the Feast of the Exaltation of the Holy Cross. In preparation for the new school year, a one-day seminar has been organized for Sunday School directors and teachers.

The seminar is taking place under the auspices of the Prelate and will be led by Christian Education Co-Director Very Rev. Fr. Muron Aznikian. It will be held at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall from 4:00 to 6:00 p.m.

Ս. ԳՐՈՅ ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՄԱՔՆԵՐԸ ԿՐ ՎԵՐՍԿԱՆ

Ամառնային արձակուրդէ ետք, Թեմիս եկեղեցիներու երիտասարդականի եւ Ս. Գրային սերտողութեան պահերը վերսկսած են, առաջնորդութեամբ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի գոյգ վարիչներուն՝ Գերայ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեանի, Զոգչ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի, եկեղեցիներու հոգեւոր հովիւներուն եւ Գրիգոր եղբայր Սարլեանի:

Անոնք, որոնք հետաքրքրուած են, մանրամասնութեանց համար կրնան կապ հաստատել իրենց շրջանի եկեղեցւոյ գրասենեակին հետ:

Յայտնենք որ Զայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Եղբայրակցութեան սերտողութիւնները կը շարունակուին Թեմիս կարգ մը եկեղեցիներու մէջ:

BIBLE STUDY SESSIONS RESUME IN PRELACY PARISHES

Following summer break, Bible Study sessions have resumed in our parishes. The sessions are led by Prelacy Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian and pastors.

There are also sessions led by Mr. Krikor Misserlian and the Armenian Ecclesiastical Brotherhood in most parishes.

Please contact your local church office for further details.